200 հոգի սպանված ու վիրաւոր։ Սպանուեց տեղակալ Տիլիչէյևը, դերի ընկան փոխ–գլխ. Յակոբեանը և 2րդ թեթև մարտկոցի պետ տեղակալ Բագրատունին։ Թշնամու ձեռքն անցան 2րդ թեթև մարտկոցի 2 թնդանօթները, որոնց վարիչները մինչև վերջ ցոյց տուին հերոսական դիմադրութիւն և հեռացան թնդանօթները անգործածելի դարձնելուց յետոյ։

Դեկտ. 29–ին օգնութեան հասաւ գնդ. Տիմչենկօն, որ ընդունեց աջ թևի ընդհանուր հրամանատարութիւնը՝ խնդիր ստանալով հսկողութեան տակ առնել № 2660 և Ղըզըլ–Կայա բարձունքներից դէպի հիւսիս գտնուող տարածութիւնը և, եթէ վրացիները Շուլաւերի դիրքերից հեռանան, արևելքից անցնել նրանց թիկունքը, շարժուելով դէպի Աչաղա–Սարայլ ու սերտ կապ պահելով Կորոլկովի հետ՝ ապահովել աջ թևը։ Կենտրոնի՝ Կորոլկովի զօրամասին՝ բաղկացած 4րդ գնդի 10 վաշտից, միլիցիոն գնդի 4 վաշտից, 2րդ դիվիզիոնի 2 հարիւրեակից, 2րդ գնդի 1 գումարտակից, 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթից ու 1 զրահապատ գնացքից՝ հրամայուեց յամառ կերպով պաշտպանել Դամիա—Սաղախլու գիծը՝ Խոժոռնիում կենտրոնացնելով 4րդ գունդը, առաջաւոր մասերը պահելով Դամիա գիւղում և աջից կապ ունենալով Տիմչենկոյի թևի հետ։ Վերջինիս նոր հրաման տուեց՝ ամուր կերպով պահել Սաղախլուի մօտի երկաթուղաղծից 2660 բարձունք — Բերփիլի գիւղ գիծը։ 2րդ գնդի մէկ գումարտակը թողնուեց պահեստում Ճոճկան գիւղի մօտ։

Մինչ կենտրոնում և աջ թևում կատարւում էին այս դէպքերը, ձախ թևից երեք օր շարունակ լուր չստացուեց. գնդ. Տէր–Նիկողոսեանը բոլորովին կտրուել էր ընդհանուր հրամանատարութիւնից։ Յետոյ պարզուեց, որ 5րդ գունդը բռնուած էր բծաւոր տիֆով, հիւանդացել էին և գնդ. Տէր–Նիկողոսեանը ու իր սպայակոյտի սպաները։ Այդ պատճառով կարելի չէր եղել կատարել ստացուած հրամանը, որով կարգադրւում էր գրաւել Եկատերինֆելդ—Բոլնիս–Խաչէն գիծը և 4րդ գնդի հետ միասին շարժուել դէպի Արախլու։ Հակառակ պարագային, եթէ կռիւները գնան անյաջող, ամուր պահել Մեծ–Դումանիս—Բոլնիս–Խաչէն ճակատը։ Այս հրամանը գնդ. Տէր Նիկողոսեանը չէր կարողացել կատարել, և այդ ծանր անդրադարձում ունեցաւ յետագայ գործողութիւնների վրա։

Դեկտ. 30–ի առաւօտեան վրացիները փորձեցին մօտենալ Սաղախլու կայարանին ու Լամբալու գիւղին, բայց մեր հրետանիի կրակով յետ շպրտուեցին։ Նորից անցնելով յարձակման՝ մօտ 500 հոգով մտան Սաղախլու, իսկ մի ուրիշ զօրամաս գրաւեց 2660 բարձունքը։ Մեր զրահապատը կրակի բռնեց Սաղախլուն, ուր սկսել էր հաւաքուել թուրք զինուած խուժանը։ Վրացիներն ու թուրքերը հեռացան Սաղախլուից և սկսեցին առաջ քաշել իրենց թնդանօթներն ու ռմբակոծել մեր զրահապատը, որը, փոխ–տեղակալ Սուլթան–Շահի հրամանատարութեան տակ յանդուգն յարձակումներ էր գործում և ահագին վնաս պատճառում հակառակորդին։ Մերոնք քանդեցին Սաղախլուից հիւսիս գտնուող երկաթուղու կամուրջը։ Շուլաւերից առաջացող վրացիներն ու թուրքերը այրեցին Դամիա գիւղը։